ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶ
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔ

ՀՀ Վայոց Ձորի մարզի Եղեգնաձոր համայնք 18 նոյեմբեր 2022

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 16
ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 14 անդամներ:

Բացակա էին՝ Դավիթ Հարությունյանը, Ծովինար Հովհաննիսյանը, Նեկտար Հովհաննիսյանը, Սոնա Մարգարյանը, Մուշեղ Ներսիսյանը, Մարատ Շահբազյանը, Ռոմիկ Վարդանյանը

Ավագանու նիստին մասնակցում էին՝

Համայնքի ղեկավարի տեղակալ Հրաչյա Վարդանյանը, օգնական՝ Գառնիկ Խաչատրյանը, Գլաձոր բնակավայրի վարչական ղեկավար Սամվել Օրդոյանը, Վերնաշեն բնակավայրի վարչական ղեկավար Գոռ Առաքելյանը, համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման բաժնի պետ Հայկանուշ Ավագյանը, քաղաքաշինության, հողաշինության, գյուղատնտեսության և բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ Սամվել Այվազյանը, աշխատակազմի գլխավոր մասնագետներ՝ Գնել Դովլաթյանը և Անի Հասրաթյանը, ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի կրթության, մշակույթի և սպորտի վարչության փորձագետ Աղասի Հովհաննիսյանը:

Նիստը վարում էր համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Վարդան Ավագյանը:

Նիստն արձանագրում էր աշխատակազմի քարտուղար՝ Մարինե Հովհաննիսյանը:

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 18-Ի ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 6-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց.**

1. Հաստատել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հերթական նստաշրջանի՝ նոյեմբերի 18-ի հերթական նիստի հետևյալ օրակարգը.

1) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի նոյեմբերի 18-ի հերթական նիստի օրակարգը հաստատելու մասին:
2) Դրամական օգնություն տրամադրելու մասին:
3) Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեում փոփոխություն կատարելու մասին:
4) Վերնաշեն բնակավայրում կառուցված գազատարը անհատույց (անժամկետ) օգտագործման տրամադրելու համար թույլտվություն տալու մասին:
5) Անհատ ձեռնարկատեր Վարդուհի Իսախանյանի դիմումի քննարկման մասին:
6) Համայնքային սեփականություն հանդիսացող հողերն աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու և Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 8-ի թիվ 80-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետը ուժը կորցրած ճանաչելու մասին:
7) Անհատույց օգտագործման իրավունքով տարածք տրամադրելու մասին:
8) Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի թիվ 112-Ա և հոկտեմբերի 6-ի թիվ 125-Ա որոշումներն անվավեր ճանաչելու մասին:
9) Եղեգնաձոր համայնքի վարչական տարածքում գտնվող հողատարածքները համայնքային սեփականություն ճանաչելու մասին:
10) Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային ուղղված ուղերձ ընդունելու մասին:
11) Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օրը որոշելու մասին:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 138-Ա/

Լսեցին.
ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀՐԱՉՅԱ ՎԱՐԴԱՆՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ և 7-րդ կետերով, հիմք ընդունելով համայնքի ավագանու 2022 թվականի ապրիլի 12-ի թիվ 37-Ն որոշմամբ հաստատված կարգի 24-րդ կետը և համայնքում սոցիալապես անապահով ընտանիքներին սոցիալական աջակցություն ցուցաբերելու գործընթացն ապահովող հանձնաժողովի եզրակացությունը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի 2022 թվականի տարեկան բյուջեի 10.07.01 բաժնի տնտեսագիտական դասակարգման 4729 /այլ նպաստներ բյուջեից/ հոդվածից համայնքի սոցիալապես անապահով ընտանիքներին հատկացնել դրամական օգնություն՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 139-Ա/

Լսեցին.
ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՀԱՅԿԱՆՈՒՇ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետով և «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 33-րդ հոդվածի 3-րդ և 4-րդ մասերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի մարտի 4-ի թիվ 23-Ն որոշմամբ հաստատված բյուջեում կատարել հետևյալ փոփոխությունը.

1) գործառնական դասակարգման 04.9.1 ոլորտի, տնտեսագիտական դասակարգման 8411 /հողի իրացումից մուտքեր/ հոդվածին ավելացնել 7 870 000 (յոթ միլիոն ութ հարյուր յոթանասուն հազար) ՀՀ դրամ

2) Պակասեցնել Գործառնական դասակարգման՝

ա) 01.6.1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4251 (շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում) հոդվածից 1 840 000 (մեկ միլիոն ութ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ և հատկացնել վարչական բյուջեի պահուստային ֆոնդի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածին և նպատակաուղղել ֆոնդային բյուջե.

բ) 01.6.1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների վերանորոգում) հոդվածից՝ 2 620 000 (երկու միլիոն վեց հարյուր քսան հազար) ՀՀ դրամ.

գ) 06.3.1 (ջրամատակարարում և կոյուղու համակարգ ծառայության) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների վերանորոգում) հոդվածից՝ 1 142 000 (մեկ միլիոն հարյուր քառասուներկու հազար) ՀՀ դրամ.

դ) 08.2.4 (այլ մշակույթային կազմակերպություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4239 (ընդհանուր բնույթի այլ ծառայություններ) հոդվածից՝ 130 000 (մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ.

ե) համայնքի բյուջեի պահուստային ֆոնդի տնտեսագիտական դասակարգման 4891 (պահուստային միջոցներ) հոդվածից՝ 2 373 000 (երկու միլիոն երեք հարյուր յոթանասուներեք հազար) ՀՀ դրամ, որից 2 123 000 (երկու միլիոն մեկ հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամը հատկացնել ֆոնդային բյուջե և 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամը վարչական բյուջե.

Ավելացնել՝

08.2.4 (այլ մշակույթային կազմակերպություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 4267 (կենցաղային և հանրային սննդի նյութեր) հոդվածին՝ 130 000 (մեկ հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ՝ Գլաձորի մշակույթի տան սենյակի բարեկարգման համար:

01.1.1 (համայնքապետարանի աշխատակազմի պահպանում ծառայության) տնտեսագիտական դասակարգման 4261 (գրասենյակային նյութեր և հագուստ) հոդվածին՝ 250 000 (երկու հարյուր հիսուն հազար) ՀՀ դրամ՝ ծաղիկների, ծաղկեպսակների ձեռքբերման համար:

3) ֆոնդային բյուջեում ավելացված 15 595 000 (տասնհինգ միլիոն հինգ հարյուր ինսունհինգ հազար) ՀՀ դրամ գումարը նպատակաուղղել՝

ա) գործառնական դասակարգման 01.6.1 (ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ) ոլորտի տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին՝ 740 000 (յոթ հարյուր քառասուն հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի Միկոյան 5, Մոմիկի 2 և 6, Սպանդարյան 2 բ/բ բնակելի շենքերի բակերի ասֆալտապատման աշխատանքների՝ տեխնիկական և հեղինակային հսկողությունների ծառայությունների ձեռքբերման

համար և 2 523 000 (երկու միլիոն հինգ հարյուր քսաներեք հազար) ՀՀ դրամ Գլաձոր բնակավայրում ավտոպարկ և վարձակալական տարածք՝ երկհարկանի շենքի կառուցման աշխատանքների երրորդ փուլի աշխատանքների ձեռքբերման համար .

բ) գործառնական դասակարգման 04.5.1 (ասֆալտ-բետոնյա ծածկի վերանորոգում և պահպանում ծառայության) տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների վերանորոգում) հոդվածին՝ 449 000 (չորս հարյուր քառասունինը հազար) ՀՀ դրամ՝ փողոցների ասֆալտապատման աշխատանքների՝ տեխնիկական և հեղինակային հսկողությունների ծառայությունների ձեռքբերման համար.

գ) գործառնական դասակարգման 08.2.7 (հուշարձանների վերանորոգում և պահպանում ծառայության) տնտեսագիտական դասակարգման 5112 (շենքերի և շինությունների կառուցում) հոդվածին՝ 10 593 000 (տաս միլիոն հինգ հարյուր ինսուներեք հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր, Գլաձոր, Գետափ և Վերնաշեն բնակավայրերի Արցախյան 44-օրյա պատերազի, Եղեգնաձոր բնակավայրի Դ.Դեմիրճյանի անվան զբոսայգում գտնվող Արցախյան առաջին պատերազմում զոհվածների հիշատակին նվիրված հուշահամալիրներին կից տարածքների բարեկարգման աշխատանքների ձեռքբերման համար.

դ) գործառնական դասակարգման 06.4.1 (արտաքին լուսավորություն ծառայության) տնտեսագիտական դասակարգման 5113 (շենքերի և շինությունների վերանոնոգում) հոդվածին՝ 930 000 (ինը հարյուր երեսուն հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձորհամայնքի Եղեգնաձոր, Գլաձոր, Գետափ բնակավայրերի ներհամայնքային փողոցների լուսավորության ցանցի աշխատանքների տեխնիկական և հեղինակային հսկողությունների ծառայությունների ձեռքբերման համար.

ե) գործառնական դասակարգման 06.3.1 (ջրամատակարարում և կոյուղու համակարգ ծառայության) տնտեսագիտական դասակարգման 5134 (նախագծահետազոտական ծախսեր) հոդվածին՝ 360 000 (երեք հարյուր վաթսուն հազար) ՀՀ դրամ՝ Եղեգնաձորհամայնքի, Եղեգնաձոր բնակավայրի Նոր Ավան թաղամասի կոյուղու համակարգի նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմման ծառայությունների ձեռքբերման համար.

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 140-Ն/

Լսեցին.

ՎԵՐՆԱՇԵՆ ԲՆԱԿԱՎԱՅՐՈՒՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԳԱԶԱՏԱՐԸ ԱՆՀԱՏՈՒՅՑ (ԱՆԺԱՄԿԵՏ) ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Բնական գազի մատակարարման ծառայությունների մատուցման, արդյունավետ շահագործման և պահպանման նպատակով՝ Եղեգնաձոր համայնքի Վերնաշեն բնակավայրի թվով 4 փողոցներում (1-ին փողոց 37, 2-րդ փողոց 65, 6-րդ փողոց 18, 11-րդ փողոց 10) կառուցված գազատարն անհատույց (անժամկետ) օգտագործման իրավունքով տրամադրել «Գազպրոմ Արմենիա» ՓԲԸ-ի Վայոց ձորի գազամատակարարման և գազիֆիկացման մասնաճյուղին (Վայոց ձորի ԳԳՄ):

2. Առաջարկել համայնքի ղեկավարին՝ Վայոց ձորի ԳԳՄ-ի հետ կնքելու անհատույց օգտագործման պայմանագիր:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 141-Ա/

Լսեցին.

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՎԱՐԴՈՒՀԻ ԻՍԱԽԱՆՅԱՆԻ ԴԻՄՈՒՄԻ ՔՆՆԱՐԿՄԱՆ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով, քննարկելով ԱՁ Վարդուհի Իսախանյանի կողմից ներկայացված բոքսի հարվածային տանձիկների (խաղասարք) տեղադրման համար տարածքներ տրամադրելու մասին դիմումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Առաջարկել ԱՁ Վարդուհի Իսախանյանին՝ իր կողմից ձեռք բերված բոքսի հարվածային տանձիկները տեղադրել Եղեգնաձոր քաղաքի Վ. Գևորգյան փողոց 2/1 հասցեում գտնվող «Եղեգնաձորի մանկապատանեկան մարզադպրոց» ՀՈԱԿ-ի շենքի հարակից տարածքում՝ մեկ տարի ժամկետով:

2. Սույն որոշման առաջին կետում նշված խաղասարքերից յուրաքանչյուրի տեղադրման տարածքի համար ամսական վարձավճար սահմանել 10 000 (տաս հազար) ՀՀ դրամ:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 142-Ա/

Լսեցին.
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԵՐՆ ԱՃՈՒՐԴՈՎ ՕՏԱՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ԵՎ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 8-Ի ԹԻՎ 80-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ՀԱՎԵԼՎԱԾԻ 12-ՐԴ ԿԵՏԸ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի, Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ մասերի և «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 37-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով՝ **ավագանին որոշեց.**

1. Տալ թույլտվություն Եղեգնաձոր համայնքի /բնակավայրերի/ վարչական տարածքում գտնվող համայնքային սեփականություն հանդիսացող հողերից աճուրդով օտարելու համար՝ համաձայն հավելվածի:

2. Ուժը կորցրած ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի հունիսի 8-ի «Համայնքային սեփականություն հանդիսացող հողերն աճուրդով օտարելու համար թույլտվություն տալու մասին» թիվ 80-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 12-րդ կետը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 143-Ա/

Լսեցին.
ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏԱՐԱԾՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՍԱՄՎԵԼ ՕՐԴՈՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ և 42-րդ կետերի պահանջներով և համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 685-699 հոդվածների,

հիմք ընդունելով քաղաքացի Խուրշուդ Համբարձումյանի դիմումը՝ **ավագանին որոշեց.**

1. Եղեգնաձոր համայնքի Գլաձոր բնակավայրի մշակույթի տան սենյակներից մեկը անհատույց օգտագործման իրավունքով, 5 (հինգ) տարի ժամկետով, տրամադրել քաղաքացի Խուրշուդ Համբարձումյանին՝ համայնքի երեխաների համար նկարչության պարապմունքներ անցկացնելու նպատակով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 144-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 15-Ի ԹԻՎ 112-Ա ԵՎ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 6-Ի ԹԻՎ 125-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՆ ԱՆՎԱՎԵՐ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 38-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերով՝ **ավագանին որոշեց.**

1. Ընդունման պահից անվավեր ճանաչել Եղեգնաձոր համայնքի ավագանու 2022 թվականի սեպտեմբերի 15-ի՝«Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող 1.53936 հա էներգետիկայի հողը մրցութային կարգով կառուցապատման տրամադրելու համար թույլտվություն տալու մասին» թիվ 112-Ա և հոկտեմբերի 6-ի՝ «Հողամասի նպատակային նշանակությունը փոխելու մասին» թիվ 125-Ա որոշումները:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 145-Ա/

Լսեցին.

ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՎԱՐՉԱԿԱՆ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐԸ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆԻ ՀԱՍՐԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի պահանջով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի դեկտեմբերի 11-ի N 1730-Ն որոշումը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր համայնքի Եղեգնաձոր բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.01122 հա /կադաստրային ծածկագիր՝10-001-0119-0171/, 0.11000 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-001-0008-/ մակերեսներով, նպատակային նշանակությունը՝ բնակավայրերի, գործառնական նշանակությունը բնակելի կառուցապատման, և Եղեգնաձոր համայնքի Մալիշկա բնակավայրի վարչական տարածքում գտնվող 0.10313 հա /կադաստրային ծածկագիր՝ 10-032-0272-0164/ մակերեսով նպատակային նշանակությունը՝ գյուղատնտեսական, գործառնական նշանակությունը վարելահող, հողատարածքները ճանաչել որպես համայնքային սեփականություն:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 146-Ա/

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՖՈՒՏԲՈԼԻ ՖԵԴԵՐԱՑԻԱՅԻՆ ՈՒՂՂՎԱԾ ՈՒՂԵՐՁ ԸՆԴՈՒՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԳՆԵԼ ԴՈՎԼԱԹՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության 13-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ մասերի պահանջներով, քննարկելով Եղեգնաձորի քաղաքային մարզադաշտի վերակառուցման հարցը՝ **ավագանին ո ր ո շ ե ց.**

1. Եղեգնաձոր քաղաքի մարզադաշտի վերակառուցման նպատակով ընդունել ուղերձ ուղղված Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիային՝ համաձայն հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 147-Ա/

Լսեցին.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶԻ ԵՂԵԳՆԱՁՈՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՀԵՐԹԱԿԱՆ ՆՍՏԱՇՐՋԱՆԻ ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ԳՈՒՄԱՐՄԱՆ ՕՐԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ՁԵԿ. ՄԱՐԻՆԵ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ/

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 62-րդ հոդվածի 2-րդ մասի պահանջով՝ **ավագանին որոշեց.**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզի Եղեգնաձոր համայնքի ավագանու հերթական նստաշրջանի հերթական նիստի գումարման օր և ժամ որոշել 2022 թվականի դեկտեմբերի 23-ին, ժամը 18:00-ին՝ Մալիշկա բնակավայրի վարչական ղեկավարի նստավայրում:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Կողմ-14	Դեմ-0	Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 148-Ա/

Նիստին ներկա ավագանու անդամներ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ _____

ԱՍՏՂԻԿ ԲԱԲԱՅԱՆ _____

ԱՐՇԱՎԻՐ ԲԱՅԱԹՅԱՆ _____

ԿԱՐԵՆ ՄԱՆԱՍԵՐՅԱՆ _____

ԹԱՄԱՐԱ ՄԿՐՏՉՅԱՆ _____

ԴԱՎԻԹ ՄՈՎՍԻՍՅԱՆ _____

ԵՂԻՇԵ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ՏԻԳՐԱՆ ՆԱՋԱՐՅԱՆ _____

ՍԱՄՎԵԼ ՈՍԿԱՆՅԱՆ _____

ԳՐԻԳՈՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԷՄԻԼ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԾՈՎԻՆԱՐ ՍԱՐԳՍՅԱՆ _____

ԱՐՄԵՆ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

ՎԱՀԵ ՎԱՐԴԱՆՅԱՆ _____

համայնքի ղեկավարի առաջին տեղակալ

ՎԱՐԴԱՆ ԱՎԱԳՅԱՆ_____

Սիսպն արձանագրեց՝ Մարինե Հովհաննիսյանը

_____